ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Agency

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

կնքված

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

միջև

ՀՀ, ք. Երևան «09» փետրվարի 2022

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կնքվում է

«Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում,

որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում Ավստրիական զարգացման համագործակցության կողմից:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանում Ավստրիական զարգացման գործակալության կողմից:

I. ՆՊԱՏԱԿԸ

Սույն Փոխըմբռնման հուշագրի նպատակն է ձևավորել համագործակցության շրջանակ՝ տրամադրելու կարողությունների զարգացման ծրագիր ***ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին (ՍԱՏՄ)*** և վերջինիս ***ենթակայությանը հանձնված «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (ՊՈԱԿ),*** ՍԱՏՄ-ի և վերը նշված լաբորատորիայի ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողություններն ամրապնդելու համար:

Տվյալ շրջանակի ներքո, կողմերը մտադիր են մշակել համագործակցության և ընդհանուր հանձնառության ոգով իրականացվող հատուկ գործողություններ:

II. ԱՌԱՐԿԱՆ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ *«ՓՀ»*) կնքվում է Ավստրիական զարգացման գործակալության (այսուհետ՝ *«ԱԶԳ»*) և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ «ՍԱՏՄ») միջև, որոնք համատեղ կոչվում են *«Կողմեր»*:

Հաշվի առնելով կողմերի ընդհանուր շահը, այն է՝ բարելավել սննդամթերքի անվտանգության ոլորտը ՀՀ-ում, կողմերը եկել են համաձայնության՝ միավորել իրենց ջանքերն ու ռեսուրսները և արդյունավետ համագործակցել «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») շրջանակներում՝ տվյալ համագործակցության անհրաժեշտ արդյունքներն ապահովելու համար:

Սույն Փոխըմբռնման հուշագիրը սահմանում է կողմերի պատրաստակամությունը համագործակցել սննդամթերքի անվտանգության ոլորտի տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ՝ ՍԱՏՄ անձնակազմին համապատասխան ուսումնական ծրագրեր տրամադրելու միջոցով: Ուսումնական ծրագրերը ներառում են նաև վերապատրաստումներ և փոխանակման ուսումնական այց՝ ԵՄ անդամ որևէ երկիր: Ծրագիրը նաև նախատեսում է տեխնիկական աջակցության տրամադրում լաբորատորիային, ներառյալ՝ թունաքիմիկատների մնացորդների հայտնաբերման ժամանակակից մեթոդների ներդնում, լաբորատորիայի ներկայիս սարքավորումների արդիականացում և նոր ներդրված մեթոդների շուրջ՝ լաբորատորիայի անձնակազմի կարողությունների զարգացում:

III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Գիտակցելով ՍԱՏՄ-ի և իր ենթակայությանը հանձնված լաբորատորիայի ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական կարողությունների բարելավման և ընդլայնման կարևորությունը ՀՀ-ում, և **Հատկապես, հաշվի առնելով** նորարարական և թվային գյուղատնտեսության զարգացման վերջին համաշխարհային միտումները՝ Կանաչ գյուղատնտեսության մոդելի

մոտեցման առաջնահերթության միջոցով, որը խթանվում և աջակցվում է ԵՄ-ի կողմից՝ 2019թ. հոկտեմբերին մեկնարկած, ԱԶԳ կողմից իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի միջոցով,

Նկատի ունենալով ՀՀ Գյուղատնտեսության նոր ռազմավարությունը (2020-2029թթ.), Ավստրիական զարգացման համագործակցության և Օգնության արդյունավետության մասին Փարիզյան հռչակագրի սկզբունքը՝ գործել հաշվի առնելով գործընկեր երկրի առաջնահերթությունները, ինչպես նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը՝ կապված նաև ՀՀ սանիտարահիգիենիկ և սննդամթերքի անվտանգության ոլորտների բարելավման հետ,

Կողմերը գալիս են համաձայնության՝ հետևյալ համատեղ իրականացվող նախաձեռնությունների շուրջ, որտեղ՝

ԱԶԳ-ը իր EU-GAIA ծրագրի միջոցով, պատրաստ է՝

- տրամադրել տեխնիկական և փորձագիտական խորհրդատվություն և խորհրդատվական աջակցություն՝ ՍԱՏՄ-ին և նրա ենթակայությանը հանձնված լաբորատորիային, զարգացնելու ՍԱՏՄ-ին լաբորատոր անձնակազմի կարողությունները՝ ***սննդի անվտանգության վերահսկման ոլորտում ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման*** ընթացակարգերի ներդրման միջոցով;
- ապահովել ՍԱՏՄ-ին անհրաժեշտ կարողությունների զարգացման ուսումնական ծրագրով, ներառյալ միջազգային փոխանակման ուսումնական այց՝ ԵՄ անդամ երկիր;
- աջակցել ՍԱՏՄ-ին՝ ապահովել ***բուսասանիտարական պաշտպանությունը և առողջությունը***, խթանելով ԵՄ սննդի համակարգի ստանդարտները և սննդի որակի վերահսկման մեխանիզմը՝ ՀՀ անասնաբուժական և բուսասանիտարական ոլորտներում:

ՍԱՏՄ պատրաստ է՝

- ապահովել իր մասնագիտական անձնակազմի/փորձագետների ներգրավվածությունը բոլոր անհրաժեշտ վերապատրաստման ծրագրերում;
- ապահովել տեսչական կառավարման մոդելի և գործիքակազմի հետագա արդիականացումը՝ ՍԱՏՄ մասնագետների և այլ շահագրգիռ կառույցների շրջանում, ԵՄ անդամ երկիր կատարած միջազգային փոխանակման ուսումնական այցից ստացված գիտելիքների հիման վրա և ոլորտի կառավարման գործնական կիրառությունների միջոցով;
- ապահովել ԵՄ երկրների լավագույն փորձի փոխանակումը և նման փորձի տեղայնացումը մշտադիտարկման ազգային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներում;

- երաշխավորել EU-GAIA ծրագրի կողմից տրամադրված բոլոր իրերի/միջոցների/սարքավորումների պատշաճ օգտագործումը և տեխնիկական սպասարկումը՝ որոնք նշված են EU-GAIA-ի և ՍԱՏՄ-ի միջև ստորագրվելիք հանձնման ակտերում;
- տեղեկացել ԱԶԳ սույն Փոխըմբռնման հուշագրի բարեհաջող իրականացմանը սպառնացող ցանկացած հանգամանքի մասին;

IV. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՍԱՏՄ-ը և ԱԶԳ-ը, ինչպես նաև Եվրամիությունը, ունեն անսահմանափակ իրավունք՝ անվճար օգտագործելու Համագործակցության շրջանակներում մշակված և տրամադրված բոլոր ուսուցողական փաստաթղթերն ու նյութերը:

V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱՏՄ-ը ընդունում է, որ ԱԶԳ-ը պարտավոր է հետևել իր հիմնական գործառնական սկզբունքներին, դոնոր կազմակերպությունների կանոնակարգերին և պայմանագրային պարտավորություններին:

Կողմերը պարտավոր են՝

- պատշաճ կերպով կատարել իրենց պարտավորությունները և/կամ առաջադրանքները այնպես, ինչպես սահմանված և համաձայնեցված է սույն Փոխըմբռնման հուշագրում;
- պատշաճ կերպով պահպանել յուրաքանչյուր կողմի կողմից տրամադրված և/կամ մշակված գրությունների, փաստաթղթերի, համակարգչային տվյալների, սարքավորումների և տեղեկատվության գաղտնիությունը;
- պատշաճ կերպով միմյանց ցուցաբերել աջակցություն, օգնություն և համագործակցություն՝ որոշումների կայացման գործընթացում, տրամադրելով ստույգ և թափանցիկ տեղեկատվություն;
- հարգել միմյանց կողմից ընդունված և/կամ համաձայնեցված որոշումները;
- աշխատանքի ընթացքում խստորեն պահպանել ՀՀ-ում գործող օրենքները:

ԱԶԳ-ը պարտավոր է՝

- ապահովել սույն Փոխըմբռնման հուշագրի ներքո իրականացվող բոլոր համատեղ նախաձեռնությունների համակարգումը և ընդհանուր վերահսկողությունը: ԱԶԳ-ը՝ որպես դոնոր կազմակերպությունների/ԵՄ-ի հետ պայմանագիր կնքած կողմ, պատասխանատու է համատեղ նախաձեռնությունների ֆինանսական ռեսուրսների պատշաճ օգտագործման և աշխատանքների գործառնական իրականացման համար:
- հանդիսանալ և ներկայանալ որպես վերոհիշյալ ծրագրի պատասխանատու մարմին՝ դոնոր կազմակերպությունների մոտ;

- ապահովել ՍԱՏՄ-ի կողմից պաշտոնապես հայտագրված բոլոր այն միջոցների և սարքավորումների գնումները և դրանց մատակարարումը, որոնք անհրաժեշտ են ՍԱՏՄ-ի ենթակայությանը հանձնված «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության լաբորատորիայի արդիականացման համար:

ՍԱՏՄ պարտավորվում է՝

- բացահայտել և ձևակերպել ՍԱՏՄ անձնակազմի/փորձագետների կարողությունների զարգացման ճշգրիտ կարիքները՝ վերապատրաստման ծրագրերի և փոխանակման ուսումնական այցերի ընթացքում դրանք պատշաճ և արդյունավետ կերպով հասցեագրելու համար;
- օգնել մյուս կողմ(եր)ին՝ կարողությունների զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներում, այդ թվում՝ կանաչ և օրգանական գյուղատնտեսության առանձնահատկությունների կառավարման պետական վերահսկողության հատուկ ասպեկտների հետ կապված նոր գիտելիքների և փորձի տարածման ու ներդրման գործընթացում;
- աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի և ուսումնական նյութերի մշակման և տրամադրման աշխատանքներին՝ սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում առաջընթացի գործողությունների արդյունավետ իրականացման համար;
- երաշխավորել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիապես արդիականացված լաբորատորիայի շարունակական և կայուն գործունեության համար:

VI. ՀԱՄԱՏԵՂ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ վերահսկողության նպատակն է ապահովել համատեղ իրականացվող նախաձեռնությունների արդյունավետ իրագործումը պահանջվող ժամկետներում: Սա ենթադրում է համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքների համապատասխանության կանոնավոր ստուգում՝ ըստ համատեղ աշխատանքային պլանով նախատեսված արդյունքների:

ՍԱՏՄ-ը՝ ԱԶԳ-ի հետ համատեղ, պատասխանատու է սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող համատեղ նախաձեռնությունների համակարգման և ընդհանուր վերահսկողության համար:

VII. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ցանկացած այլ հնարավոր համատեղ նախաձեռնության ծախսերը ֆինանսավորվում են երկկողմանի որոշման համաձայն՝ ըստ անհատական համաձայնագրի, համապատասխան տեխնիկական առաջադրանքի և յուրաքանչյուր դեպքի հետ առնչվող նամակագրության:

Սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսված բոլոր նախաձեռնությունների ֆինանսավորումը կախված է ֆինանսական միջոցների առկայությունից և կողմերից որևէ մեկի ղեկավարության վերջնական որոշումից:

VIII. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է փոփոխության ենթարկվել փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Նման փոփոխությունն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից որոշված օրվանից և կազմում է սույն Փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մաս:

IX. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման և/կամ մեկնաբանման արդյունքում ծագած ցանկացած վեճ կամ տարաձայնություն կարգավորվում է բարյացակամ մթնոլորտում՝ կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

X. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած կողմ իր աշխատանքը կատարում է սույն Փոխըմբռնման հուշագրի պահանջներին համապատասխան՝ որպես անկախ մարմին, և ոչ թե մյուս կողմի ներկայացուցիչ:

Կողմերի միջև համակարգումը չի հակասում յուրաքանչյուր կողմի ներքին շրջանառության փաստաթղթերին, հատկապես կանոնադրությանը, քաղաքականությանը, դիրքորոշման փաստաթղթերին և ռազմավարություններին:

XI. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- Սույն Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից՝ 2 տարի ժամկետով, եթե այն ավելի վաղ չի դադարեցվում՝ ստորև նշված դրույթի համաձայն:
- Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ՝ կողմերից յուրաքանչյուրի կողմից, 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին՝ այն դադարեցնելու իր մտադրության մասին:
- Սույն Փոխըմբռնման հուշագրի դադարեցումը չի ազդում սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող որևէ ընթացիկ գործողությունների/նախագծերի վավերականության և ժամկետի վրա՝ մինչև տվյալ գործողությունների/նախագծերի ավարտը:
- Սույն Փոխըմբռնման հուշագիրը կնքված է հայերեն և անգլերեն լեզուներով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
- Հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Ի վկայություն վերոգրյալի, կողմերը ստորագրում են սույն Փոխըմբռնման հուշագիրը:

« 9 » փետրվար 2022թ., Երևան	« 9 » փետրվար 2022թ., Երևան
Գեորգի Ավետիսյան	Պասխալիս Բոկկերս
Հայաստանի Հանրապետության Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար	ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» ծրագրի թիմի ղեկավար